

Արծաթ կը հոսին հնչուն աղբիւրներ. —
Քաղցրիկ լուսընկայ...

Հինայ մատներով հարսերն են գիւղին,
Դաշտերուն վերայ սիրոյ ծով մը կայ,
Քաղհանի երգէն իրենք կ'օրօրօւին.
Աղուո՛ր լուսընկայ,

Արծաթէ ճրրագ, քեզ ո՛վ է մոռցեր
Ամէն աղբիւրի և լիճի վերայ,
Արծաթ կը հնչեն դալար եղէգներ.
Մ'եղբրիկ լուսընկայ...

Հարսնիւրէն ելած քաղհան է կ'ընեն,
Դաշտերուն վերայ բուրմունքի ծով կայ.
Վարդավառն է մեր կարմիր վարդերէն,
Աղուո՛ր լուսընկայ,

Արծաթէ ճրրագ, քեզ ո՛վ է դըրեր
Ամէն աղբիւրի ու քարի վերայ.
Արծաթ կը հնչեն հնչուն սըրինգներ,
Շողիկ լուսընկայ...

«Քաղհան, քաղհան է» կ'երգեն, կ'օրօ-
րօւին, [րուին,
Դաշտերուն վերայ լոյսի ծով մը կայ.
Ալ մըրափեր է սիրտը զեփիւտին,
Աղուո՛ր լուսընկայ.

Քրքո՛ւմ է ծաղկեր ամէն երդիքի,
Ամէն աղբիւրի ու ծառի վերայ,
Դաշտերէն գիւղակ ճամբան է ոսկի,
Մ'արո՛գ լուսընկայ,
Շողիկ լուսընկայ...

ԱՐՄԵՆ — ԵՐԿԱՅ



ԱՅԼԵԼԱՅԻՔ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՌԻՂԻՂ ԳԱՂԱՓԱՐԸ

«ԴԻՏԱՐԱՆ»ի մէկ յօդուածի միջոցով

=====

(Շար. տես Բազմալիզա էջ 248)

Ե. — Գալթակցիք է յօդուածագիրն
ընդհանուր քրիստոնէից այն սովորութեան
դէմ, որ փոքր մանուկները կը մկրտեն.
«Ս. Գրոց մէջ ո՛չ մէկ քան, կ'ըսէ նա (էջ
389), կը վստիւցեմ մանուկներու մկրտու-
թիւնը», և, «Ս. Գրոց մէջ մկրտութեան
արարողութիւնը միայն հաստատեցանք
համար է »:

Պատասխան 1. — Ճիշտ է որ Նոր
Կտակարանի մէջ, բացայայտ՝ կամ լաւ
ևս նշանական կերպով ոչ մէկ տեղ կայ,
թէ Մանուկները մկրտեցէք. բայց չէ՞ որ
շատ բաներու մէջ — ինչպէս քիչ առաջ
ըսի — Ս. Գրոց լռելիայն իմաստը, ուղիղ
տրամաբանութիւնն ու Հարց Աւանդու-
թիւնը, մեզի կրնան լոյս ընծայել: Արդ
տեսնենք թէ ասոնք ինչ կ'ըսեն:

Գիտենք նախ որ մանուկներն ևս ճշ-
մարտապէս մարդ են, և իբրև մարդ՝ իրա-
ւունքի ենթակայ, և «Ես» ունեցող: Գի-
տենք դարձեալ որ Քրիստոս եկաւ որպէս
զի զմարդ (մարդկային բնութիւնը) փրկէ.
ուրեմն մանուկներն ալ այս փրկութեան
մասնակից են, անոր իրաւունք ունին.
բայց — ինչպէս վերը տեսանք — առանց
մկրտութեան, ո՛չ ոք «կարէ մտանել, տե-
սանել զարքայութիւն Աստուծոյ». Յով. Գ.
1-9 »: Ուրեմն՝ մանկանց ալ «սպարտ է
ծնանել վերստին »:

Պատասխան 2. — Դարձեալ Յիսուսի
հրամանն այնքան ընդարձակ է՝ որ բնաւ
չի մերժեր մանուկներն, այլ մանաւանդ կը
բովանդակէ զանոնք. «Երթայք, կ'ըսէ
Նա (Մարկ. Ժ. 9. 15-7), Երթայք յաշ-
խարհ ամենայն, և քարոզեցէք զաւետա-
րանն ամենայն արարածոց: Որ հաւատայ
և մկրտեցիք են »: ամենայն արարածոց, ոչ

միայն քարոզել՝ այլ նաև մկրտել կը հրա-
մայէ. որովհետև այն « Որ » մասնիկը,
ամենայն արարածոց հետ կապ ունի. և
ինչպէս քարոզելու հրամանն « ամենայն
արարածոց » կ'երթայ, նոյնպէս մկրտե-
լունը. — « Արարածոց », կը հասկցուի,
անոնց՝ որ ի վիճակի են, կարող են քարո-
զութիւնն ընդունելու, որ գերի են և կա-
րօտ փրկութեան. ուրեմն ոչ եթէ քարի
և փայտի կամ անխօսուն անասնոց կը
հրամայէ « իմաստութիւն Հօր Յիսուս »
քարոզել իր աւետարանն ու մկրտել, այլ
այն արարածոց՝ որ յնոյնքամբ իմաստուն
են, մարդուն:

Պատասխան 3. — Յիսուսի այս խօս-
քերն, Ազատագեղոսն ալ, ինձմէ և յօ-
ղուածագրէն 1600 տարի առաջ շատ լաւ
ըմբռնած էր ու կ'ըսէր (էջ 304). « Եկեալ
և ինքն մկրտի ի Յովնանէն, ... զբնալ
կտակ յաւիտեանական, և իւրով արեամբն
կնքեալ, ապրել ամենեցուն լուսարեւր և
կենսատու մկրտութեամբն, հրամայեաց ու-
մենայն երկրաժիւ մարդկան, ամենայն մե-
ղեաց, աստուածանման պատկերին փրկու-
թեան նմանի »: Ասկից աւելի պարզ ու գեղե-
ցիկ կ'ըսելի չէ խօսիլ. կ'ըսէ ուրեմն մեր
լուսալ Հայրը, ինչպէս ինքը՝ Յիսուս մկր-
տուեցաւ, նոյնպէս յաւիտեանական կտակ մը
բողոց և հրամայեց, որ ամեն մարդ, ամեն
մեղի իրեն նման ընէ, այսինքն է մկր-
տուի՝ որպէս զի փրկուի:

Պատասխան 4. — Անշուշտ սոյն Յօ-
ղուածագիրը մանուկներն « արարածոց »
կարգէն պիտի չուզէ արտաքսել. Յիսուս
կը հրամայէ բոլոր արարածները մկրտել,
իսկ « ԴԻՏԱՐԱՆ » ի անանուն Յօղուածագիրը՝
կը մերժէ բանաւոր սիրուն արարածիկ-
ներն. որոնք պէտք է մտիկ ընել, Յիսու-
սի՝ թէ Յօղուածագիրն: Մենք մանուկ-
ները ճանչնալով բանաւոր էակներ կամ
զէր « արարած » կը մկրտենք զանոնք, իսկ
Յօղուածագիրը կ'արգելու. ո՞վ իրաւունք
ունի:

Պատասխան 5. — Նոյնպէս, մկրտու-
թիւնը — ինչպէս քիչ վերջ պիտի տեսնենք
— հաստատուեր է ջնջելու համար զլիա-

ւորապէս Սկզբնական մեղքը, բնութեան
սղաք. բայց « Ամեն մարդ, ըստ Յօղուա-
ծագրին, (էջ 394), ՄԵՂԱՌՈՐ ԾՆԱՅ Է, ոչ
թէ իր ընտրութեամբ, հապա ժառանգութեամբ՝
Աղամի մեղքի պատճառաւ »: հետեաբար՝
մանուկներն ալ ունին այն աղտը՝ Ուրեմն
իրենց ալ անհրաժեշտ է լուսաման խոր-
հուրդը, այն է մկրտութիւնը, թէ մանուկ-
ները մեղաւոր են՝ լսենք ինչ կ'ըսէ Ս.
Գիրքը (Յովք ԺԻ, 4). « Իսկ արդ ո՞վ իցէ
սուրբ յաղտոյ, այլ և ոչ ոք, թէպէտև
միոյ աւուր իցեն կեանք նորա ի վերայ
երկրի »: Ասոր նման ուրիշ շատ տեղեր:

Պատասխան 6. — Մանկանց մկրտու-
թեան դէմ բողոքելուն պատճառն է, որով-
հետև « մկրտութեան արարողութիւնը, կ'ըսէ
նա, (էջ 389, սիւն, ա.), միայն հաւատա-
ցեալներու համար է ». ըստ այնմ « Հաստատու
Յիսուսի Քրիստոսի և մկրտուի »: Որուն
կը պատասխանեմ թէ, ասկից բնաւ բան
մը չի հետեւիր մանկանց մկրտութեան դէմ,
այլ միայն կը ցուցնէ թէ անոնք՝ յորոց
կը պահանջուի հաւատքը Ս. Գրքին մէջ
չափահաս մարդիկ են եղեր, ուրիշ ոչ ինչ.
այսօր իսկ այսպէս կ'ընէ Եկեղեցին երբ
չափահաս մը կը մկրտէ: Որով Յօղուա-
ծագրին կ'յայնայ, ինքը պէտք է ցուցնել,
թէ՛ Ս. Գիրքը կ'արգելու մանկանց մկր-
տութիւնը:

Պատասխան 7. — Բաց աստի, Ս.
Հայրը՝ որ մեզմէ շատ աւելի մօտ էին
Առաքելոց, Երանոս (140-200) և Մեծն
Որոգինէն, կը հաստատեն մեզ թէ ման-
կանց մկրտութիւնը՝ Առաքեալներէ աւան-
դուած է: Տես թէ առաջինն ինչ կ'ըսէ.
« ամենքն ալ անձամբ եկաւ փրկելու, ա-
մենքը՝ կ'ըսեն, որ իրմով կը վերածնանի
յժտուած, մանուկներ ու սղաք, պատա-
նիներ, երիտասարդներ ու ծերեր = om-
nes venit per semetipsum salvare, omnes, inquam, qui per Eum re-
nascuntur in Deum, infantes et
parvulos et pueros, et juvenes, et
seniores »: Ինչպէս կը տեսնուի, այդ Ս.
Հայրը ոչ մէկ հասակ զուր կը թողու: Իսկ
Մեծն Որոգինէն դեռ աւելի բացայայտ

կերպով այսպէս կ'ըսէ. «Անոր համար ինկեղեցիին՝ Առաքեալներէ ընդունած է աւանդութիւն, ճակ մանկանց մկրտութիւնը մատակարարելու». և պատճառն է այն աղտը՝ ուսկից «ոչ որ, թէպէտև միոյ առարկայն կեանք նորա ի վերայ երկրի» գերծ է (Առաջնոյն համար տ. M. P. G. VII, 784. Երկրորդին M. P. G. XIV, 1047, 1010): Արդ ես կարծեմ այդ երկու պատկանելի հեղինակութիւնք, ինձմէ և «ԳԻՏԱՄԱՆ»ի Թօղուածագրէն շատ աւելի լաւ գիտէին Առաքելոց սրբազան աւանդներն = *Ecclesia ab Apostolis*, կ'ըսէ Որդինէ, *traditionem suscepit etiam parvulis baptismum dare*». Կը շատանամ ես ասոնցմով, բայց չեմ գիտեր, արդեօք Թօղուածագիրը պիտի կարենայ, գէթ հետագայ դարերէն, ինձի դէմ այդպէս որոշ և յայտնի վկայութիւն մը բերել. շատ կը տարակուսիմ:

Պատասխան 8. — Էջ 389, Բ. սիւնակի մէջ, զՄ. Օգոստինոս չեմ գիտեր ինչո՞ւ կը բաժնաւ ինդոյս նկատմամբ: Բայց իր ըսածներէն ուրիշ տրամաբանութեան և Աւետարանին հետ կատարեալ ծանցակցութենէ զատ ուրիշ բան ես չեմ տեսներ: Կ'ընէ, ըստ Թօղուածագրին, այն Հայրապետը, թէ «ով որ անգամ չէ Քրիստոսի ինկեղեցիին, վատնօրէն յայտնուկան տանջանաց պիտի մատուռի». հետեանքը յայտնի է: Ուրեմն՝ մանուկները պէտք է մկրտել, որպէս զի չդատապարտուին. ճիշտ Յիսուս ալ այսպէս. (Մարկ. Ժ. 9, 16) «Որ հաւատայ, կ'ըսէ, և մկրտեսցի՝ կեցցէ, և որ ոչ հաւատայ՝ դատապարտեսցի»: Ուրեմն Թօղուածագրին ըսածէն կը հետևի, որ՝ Ս. Օգոստ. Քրիստոսի վարդապետութեան կը հետևի, և ոչ իրեն:

Ձ. Հայաստանեայց եկեղեցին մուրթած կը համարի մեր հակառակորդը, բանի որ «կը հաւատայ քե լուրի մկրտութիւնը աղաւական մեղաց քաղութեան համար եւ Մենք, կը յարէ (յէջ 390, սիւն, Բ), կը մերժենք ասիկայ» — ինչո՞ւ:

Պատասխան. — Հայաստանեայց եկե-

ղեցին, մերկ ու կողոպուտ իր հայրենի ուրիշ շատ մը փառքերէն, սակայն կը փայլին դեռ իր վրայ քանի մը նշոյլներ. խոտորած է նա իր Հարց Աւանդութիւնէն, այլ ունի տակաւին իր սրտին մէջ կայծ մը այն բոցավառ հաւատքին՝ զոր Գրիգորն ու իր Որդիք, Սահակն ու Մեսրոպ և կրկին Ծնորհափայլ Ներսէսը՝ վառեցին, և բարձրաբարառ քարոզեցին միշտ իրեն. քաղցը կը հնչէն տակաւին իր ականջին — թէ ոչ ամբողջ՝ գէթ մասամբ, Առաքելոց, Յաճախապատումի, Ազատանգեղեայ, Եղիշէի, և մարգարտայեւ Շարականաց անհամամատ ուսուցումները. հաւատարիմ է ուրեմն շատ բանի մէջ՝ Ս. Գրոց, Հարց և Ժողովոց: — Լսենք ատոնց ձայնը խնդրոյս նկատմամբ:

Պատասխան 1. — Գործք Առաք. Բ. 38. «Ապաշտանեցէ և մկրտուցի իշորքուն յիսր որ ի ձեռն... ի քաղութիւն մեղաց»: Նոյնպէս Գործք. Գ. 19. «ապաշտանեցէ և դարձաբուր ի ջնջել զմեղս ձեռն»: Բ. 38 կը ցուցնէ մեղաց քաղութիւնը՝ մկրտութեան արդիւնը. իսկ Բ. 19 ժողխանակ մկրտութեան՝ «Ջնջել զմեղս» կ'ըսէ: Այս երկու համարներն իրարու հետ համեմատելով՝ կը տեսնենք որ Առաքելապետին համար մեղաց քաղութիւնը (Ջնջել զմեղս) մկրտութեան հետ նոյն է. ուրեմն ըստ իրեն՝ մկրտութիւնը մեղքը կը չնչէ: Նոյնպէս Գործք. ԻԲ. 16. «Արի մկրտեսց, և յառ զմեղս ք», կը նշանակէ «մկրտուէ՛՛ որպէս զի մեղքերդ լուացուին», ուրիշ ոչինչ: Նոյնպէս Հռովմ. Զ. 1-12, ուր նախ կը ցուցնէ թէ մկրտութիւնը մահուան մատնուելիւն մ'է «թաղեցաք». յետոյ կը ցուցնէ, մկրտութեամբ մեռած ըլլալով՝ մեղքն ալ մեռած է. բայց մկրտութեամբ մեղքի մեռելիւն ու մեղքի չնչութիւն մի և նոյն բանն է. ուրեմն Առաքելաւ կը սորվեցնէ հոն թէ մկրտութիւն՝ մեղքը կը մեղցնէ, կը չնչէ, կը սրբէ: Դարձեալ Երբ. (զլ. Ժ. 22-3) «յուսցեալ զսիրտս, կ'ըսէ, ի խղիւ յարեաց և մկրտեալ զմարմին ի լուրն սրբութեան». հոս ալ շատ պարզ է Առաքելոյն վարդապետութիւնը. կը յիշեցնէ իր ազգակից-

ներուն, թէ մկրտութեան սուրբ Զուրն այնքան զօրութիւն ունի՝ որ մինչև խիղճն ալ կը թափանցէ զայն լուալու. բայց խիղճը՝ միայն մեղքով կրնայ արատաւորուիլ ու լուացուելու կարօտ ըլլալ, ուրեմն, ըստ Առաքելոյն, Մկրտութեան Զուրը մեղքը կը լուայ:

Պատասխան 2. — Իսկ Գործք Առաք. Բ. 38-ին դէմ ըրած առարկութեան մասին, թէ «այս հոմարեկը բոլորն ալ — իր խօսքերն են, (էջ 390, սիւն, Բ.) — Հրեից ուղղութեամբ էին և ոչ Հիւստանսեկոս», թող ներէ համարձակութեանս որ ըսեմ. Յօդուածագիրը կամ այն զուրիւր չէ կարգացած և կամ չէ հասկցած, որովհետև (Գործք Առաք. Բ. 9-12) «Պարեք և Մարք և Իսամայիր... Լիւքսացիք, Կիւրեհացիք, Հալմիսիցիք, Կրետացիք, Արաբացիք են», որոնց Առաքելապետը խօսքն ուղղած էր՝ կարծեմ թէ էթեանոս են: Իսկ իւրայեղացիները շեշտելուն պատճառն այն էր՝ որովհետև անոնցմէ էր զխաւորաբար իր վախն, անոնք կը հանէին ամէն դժուարութիւններն, և զանոնք դարձնելով՝ զամէնքն ալ դարձուցած կ'ըլլար:

Պատասխան 3. — Մեր Ս. Հարց վարդապետութիւնն ալ այս է. ՅԱՃԱՆԱՊԱՏՈՒՄ, Ճատ Բ. «Որ բնութեամբ է Որդի... զաւրտ և զրիժ մկրտեց յոսման գերաժնեկցաց առաջանուն ի Հոգոյն»: ԱՊԱՓԱՆԳԻՂՈՍ, 501 «Եղեն կոչնականք կոչել զամենեւսեան յաւազանս մկրտութեան, յուսնալ ի յարոյն ի սատանայական ծիոյն», էջ. 306. «Սոյն օրինակ դաւարեցոյց զարգանդ ծնեղապետութեան յարցն մկրտութեան, սրբել շուրջն, և մկրտել (== լուայ) գնորդին մաշտածոյ հոգեղէն հերայոյ, որ ի մեղացն էր մաշկալ»: Ս. ՍԱՀԱՆ, Թուրք առ Պրովզ (Սոփերը հայկ. հատ. Ա. էջ 141). «Հաւատամք ի մի Մկրտութիւն ապաշխարութեան». Նիկիական դաւանութեան հետ նոյնն է: ԵՂԻՆԷ, 289 «Մկրտութիւնս այս լիցի ինձ ի յապցումն մեղաց իմոց»: Ս. ՆԵՐՍԷՍ ԵՆՈՐՀԱԼԻ (Յիսուս Որդի). «Ձեզ մկրտեաց սուրբ ամուրդին, վրէպալով Հայր և Հոգին, Ո՛ր թէ կարօտ մաքրագունին...

Այլ զի ըզմեզս աղանային, Լուսացես չորով Յորդանիսին»: ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ, «Ենորհեացե մեզ Մկրտութիւն հոգեւոր առաջանուն ի բողոքութիւն մեղաց (հմտ. Եղիշէ, Ե. էջ 214): ԵԱՐԱԿԱՆ «Յայտնութեամբ քո Տէր ցնծացաւ երկիր և երրորդայ եղև Արամ յաստիկն յանցանոց ի մեղաց իարոց» (== յԱղամական մեղաց): «Հոգով և հրով (== մկրտութեամբ) մաքրեցիր զմարդկան աղտեղութիւն» (հմտ. Յովք Ժ. 4): «Ջրով կիզոս զմեզս մեր». (հմտ. Մատթ. Գ. 11): «Փրկեցեք զտիեզերս յանժից Աղանայ՝ որդեգրութիւն շնորհելով ի ձեռն մկրտութեան»: «Ձի զապականեալ զքնութիւնս Ջրով երես գործեցէ»: «Մկրտի Գրիստոս և սրբիկն ամենայն արարածք (հմտ. Մարկ. Ժ. 2, 16) և տալ մեզ բողոքութիւն մեղաց՝ չորով և Հոգով վերադարձնելով զմեզ». Լն: Ոյս և ասոնց նման կան ուրիշ շատ մը վկայութիւններ պարզ, որոշ և գեղեցիկ, բայց մենք այսչափ բաւ կը համարինք յիշել:

Ուղիղ է ուրեմն այս բանիս մէջ մեր եկեղեցին, և իր Հարց վարդապետութեան ձայնակից, ու դեռ պիտի գոչէ նա վեհօրէն...

Պատասխան 4. — Ս. Ժողովոց ճաճանչագեղ Զանն ի ձեռին. «Հաւատամք ի մի Աստուծո. Հաւատամք ի մի Տէր Յիսուս Քրիստոս. Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և Առաքելական Եկեղեցի, ի մի Մկրտութիւն, յապաշխարարութիւն, ի քառորդին և ի բողոքութիւն մեղաց», հետեւելով աստուածաշունչ Հարց անմահն Աթանասի և լուսածնունդ Արիստակիսի:

Է. — Յօդուածագիրը ցուցնելու համար, թէ ի Ս. Գրոց բերուած բոլոր վրէպալութիւններն Հրեից հոմար են և ոչ հեւրանաց, իր մոլորութեան ջատագով և պաշտպան կը կանչէ (էջ. 390, սիւն, Բ.) Առաքելոյն առ Ա. Կոր. Ժ. 1-2 «Հայրք մեր ամենեկին ընդ ամպովն էին և ամենեկին ընդ ծովն անցին, և ամենեկեան ի Մովսէս մկրտեցան յամպն և ի ծովն», և հոս կը կենայ:

Պատասխան 1. — Բայց Առաքեալը չի կենար, այլ դեռ առաջ կ'երթայ և կ'ըսէ, «և ամենեքին զնոյն զհոգեւոր զկեւրակուրն կերան, և ամենեքին զնոյն զհոգեւոր ըմպելին արբին, զի ըմպելին ի հոգեւոր վիմակէ, և վէմն էր ինքն Քրիստոս... այն օրինակաւ յիմեք վասն մեր»։ և 11. «Այն ամենայն օրինակաւ անցուներ ընդ նոսա, բայց զրեցաւ վասն մերոյ խրատոն»։ Ո՞վ չի հասկնար այս խօսքերուն արեւէն ալ պայծառ միտքը. ծովին անցքը և ամփի մէջ ծածկուելին, նոր կտակաւորանի Մկրտութեան (ծածկուելու, թաղման) օրինակներն են «այն օրինակաւ յիմեք վասն մեր», հոգեւոր կերակուրն (մանանայն), է օրինակ Քրիստոսի Մարմնոյն, Ըմպելին, Քրիստոսի Արեան. վիմն էր ինքն Քրիստոս, կը հասկցուի, օրինակ, պատկեր Անոր, որովհետեւ սկսեալ Յօդուածագրէն՝ ամէն մարդ ալ գիտէ, որ՝ Քրիստոս Մովսէսէն շատ վերջ եկած է։ Ուրեմն, ինչպէս վիմն էր օրինակ Քրիստոսի, նոյնպէս ծովն ու ամփը՝ օրինակ Քրիստոսի (նախաւորած) Մկրտութեան. կերակուրն և ըմպելին, օրինակ Ս. Հաղորդութեան. ըսածս այնքան ճիշտ է որ Առաքեալը 16 համարին մէջ Հաղորդութեան վրայ կը սկսի խօսիլ. ուրեմն. «ԱՅՆ ԱՄԵՆԱՅՆ ՕՐԻՆԱԿԱԿԱՆ ԱՆՑԱՆԵՐ ԸՆԴ ՆՈՍԱ, ԲԱՅՑ ԳՐԵՑԱԿ ՎԱՍՆ ՄԵՐՈՑ ԽՐԱՏՈՒ»։

Հասկցանք Պարոն։

Պատասխան 2. — Նոյնպէս Անանուհին բերած վկայութիւնը ճիշտ իրեն դէմ է. որովհետեւ կ'ըսէ Առաքեալը, «այն ամենայն օրինակաւ գրեցաւ ՎԱՍՆ ՄԵՐ» ուր Մեր դերանունն, Առաքելոյն և կորնթաց. ուց (որոնց հետը կը խօսի) անուան դերը կը կատարէ, և կորնթացիք՝ Հիթանոս էին (հմտ. կոր. Ա. գլ. Ժ. արողջ), հետեաւ բար այն վկայութիւններն ամէն մարդու համար ըսուած են, ՀՐԵԻՑ և ՀԵԹԱՆՈՍԱՑ։ Թողունք որ Քրիստոսի հրամանը չափազանց յայտնի է, Մատթ. ԻԲ, 19-20 «Գնացէ՛ք աշտուհետեւ, աշակերտեցէ՛ք զամենայն հերթանոս, մկրտեցէ՛ք զնոսա...» զ՞՞՞վ. Հիթանոսները, ուր՝ ինչպէս կը տեսնէ ան-

անուն Յօդուածագրին, Հրէից և ոչ իսկ անունը կը յիշուի։

Ը. — Միտք բողոքական այս մկրտութիւնը, կ'ըսէ նա յէջ 391, սիւն, ա., Թովն. Մկրտիլին սկսած էր, և շարունակուած Յիսուսի կողմէն, և «Հրէից ողջին ի զատ, ուրիշ ոճի մէկուն չէր պատշաճեր»։

Պատասխան 1. — Սիրով կ'ընդունին որ կարապետն սկսած էր մկրտութիւնը, կը շնորհեմ դարձեալ որ անորը Հրէից համար սաՀմանադրական էր, բայց բացարձակապէս կը մերժեմ որ Յիսուսի մկրտութիւնն ալ նոյն է կարապետինն հետ։ Նախ, սա առաջնորդ մ'ըլլալով՝ ամէն բան կը պատրաստէր Յիսուսի, որով իր ըրածներն անկատար էին, իրմէ վերջ եկողը պիտի կատարելագործէր զամենայն։ Բայց թող Մկրտիչն ինքզինք պաշտպանէ։

Պատասխան 2. — (Յովհ. Գ. 22-23. 28-9) «Գոհե՛ք ձեզէն, կ'ըսէր նա Յիսուսի դէմ զանգառողներուն, դո՛ք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ լի՛մ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա։ Որ ունի հարսն՝ = (Եկեղեցի) նա է Փեսայ = (Քրիստոս) ևն.». փեսային ուրեմն կ'իյնայ իր Հօրսը զարդարել խորհուրդներով (մկրտութեամբ)։ Իսկ փեսաւորը բան մը չունի՝ այլ միայն կ'ուրախանայ, Բայց դեռ աւելին կայ։

Պատասխան 3. — (Մատթ. Գ. 11-13) «Էս մկրտեմ զձեզ ջրով յապաշխարարիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հօգորագոյն ե ջրան գիս, և ես չեմ բաւական բառնալ զվոյշկս նորա» և ճիշտ անոր համար հօգորագոյն, անոր համար անարժան կը համարէ ինքզինք՝ կօշկնեքը բառնալու, «զի ես մկրտեցի զձեզ ի Հոգին Սուրբ և ի հոր»։ Բաղդատութիւն մ'է որ կ'ընէ իր և Յիսուսի միջև, տարբերութիւն մը կը դնէ իր և Յիսուսի մկրտութեան մէջ. ինքը՝ տկար է և լոկ ջրով կը մկրտէ, իսկ Յիսուս հօր է և ի Հոգին Սուրբ և ի հոր» (հմտ. Մարկ. Ա. 7-9. Ղուկ. Գ. 16-7. Յովհ. Ա. 33-4)։ Ուրեմն Յովհաննիսի խօսքերէն կը հետևի որ Յիսուսի մկրտու-

թիւնք յան Կ'աւելի ունի, և զին է այն բանը. Հովհն ՍՈՒՐԲ: Մկրտչին խօսքերը ըստ պարզ են, բայց թէ որ Յօգուածագիրն անոր միտքը՝ անկից լուս կուզէ հասկնալ՝ «ան տարբեր բան»:

Պատասխան 4. — Մեր Լուսաւորիչն ալ յայսպէս հասկցեր էր ու կը բացատրէր մեր դեռ հեթանոս նախնեաց, « Անայ (Յովհաննու) տալ զմկրտարին տպոյխաւ յարեան, ոչ զմկրտարին աստուածադրոյժ լուսաւորարեան կենացը, այլ տալ զապաշխարարեան սրբութեան մկրտարին » (Արարածիցոս, էջ. 303):

Թ. — Մկրտչականաց համար ըսածնեւրուն նկատմամբ, նախ յարմար կը տեսնեմ կրկնել իմաստաբարաց հասարակաց առածը. « խենթ ու խելառ բաներու մէջ՝ աւելորդ է տրամաբանութիւն փնտել — Logica in absurdis non est quaerenda », որովհետեւ երկուքին ըսածներն ալ անտեղի են: Երկրորդ կ'ըսեմ, Մկրտչականք՝ ջուրն անհրաժեշտ համարելուն մէջ աւելի ուղիղ են և Ս. Գրոց կողմ:

էջ 394, սիւն. ա. ՂԿ. ԺԲ. 50. « Մկրտութիւն մի ունիմ մկրտել » էն կը հետեցնէ թէ Յիսուս մկրտարին բառով՝ ջուրինը չի հասկնար, որով... ջուրն աւելորդ է, պէտք չէ:

Պատասխան 1. — Կ'ըսեմ որ հոն մկրտութիւն բառն այլաբանական կերպով առնուած է, ինչպէս Փրկիչն իսկ ընէ վերջ աւելի յայտնի կերպով « Բաժակ » բառը կը գործածէ, որ Հին Կտակարանի մէջ « վիշտ, նեղութիւն, յարշարանք, խաչ » կը նշանակէ: Ասկից բնաւ չի հետեւիր որ Աւետարանի մէջ նոյն յատր միշտ նոյն իմաստով գործածուած ըլլայ, մանաւանդ երբ բայցաբայտ կերպով այն կը մերժուի:

Ժ. Նոյնպէս (էջ 394, սիւն. բ. Ա. Պետ. ԳԼ. Բ, 21էն) բերուած վկայութիւնը, անմղները մուրըցներու չար նպատակաւ չարաշար կերպով մեկնուած է, և բնաւ կապ չունի Մկրտութեան ինզորոյն հետ, ինչպէս բովանդակութիւնը կարգացողը

լուս պիտի տեսնէ: Փափագելի էր ուրեմն Ս. Գրոց հետ աւելի ազնուութեամբ վարուիլ և իմաստները բնաւ չաղճատել, այլ դնել յովանդատարիւնն այնպէս՝ ինչպէս որ է:

*
**

Եզրակացութիւններա՝ ինչպէս ըսի իւրաքանչիւր մուրդութիւնը հերքած ատենս՝ նշանակած եմ Ս. Գրոց, Աւանդութեան, նաեւ Ս. Հարց, Ս. Ժողովոց և շատ անգամ բնական խելքի վրայ յենլով. արդ կը հրաւիրեմ ազնիւ Յօգուածագիրը որ ճշմարտութիւնը քննէ, ճանչնայ, գրկէ և երբեք չթողու:

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՊԱՅՔԱՐ

Աշխարհիս ամենահին լրագիրը Tching Pao — որ շուրջ 1000 տարեէ ի վեր կը հրատարակուի — զաղբրեցներու վրայ է իր հրատարակութիւնը, տպագրութեան չափազանց սզութեան պատճառաւ:



Աշխարհիս ամենածեր անձը անտարաւորոյս պէտք է ըլլայ ծերունին Եասդ, որ այժմ 123 տարեկան է: Մարդկային ցեղի այս երեցագոյնը կ'ապրի Հարաւային Ափրիկէ՝ Գրոնշդատի մօտ գործակալատան մը մէջ, որուն տէրը — ծնած 1820ին — դեռ երկու տարի է որ մեռեր է: Այս հարիւրամեայն կը վայելէ սքանչելի առողջութիւն և կը յուսայ քանի մը տարի դեռ ապրիլ: